



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

29 մարտի 2017 թվականի №106Ա
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի №336Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի մարտի 11-ի ԱԲ-335ի և «ԱՔՍԱՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մարտի 3-ի գրությունները՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 20-ի «ԱՔՍԱՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արևիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №336Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԱՔՍԱՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արևիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0557 լիցենզիայի պայմանների 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է 1259.4 կՎտ հաշվարկային հզորությամբ «Արևիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) և այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշեր՝ 2015,0 մ և 1880,0 մ,
- 2) հաշվարկային ելք՝ 1,44 մ³/վ,
- 3) հաշվարկային ճնշում՝ 105,88 մ,
- 4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 1259.4 կՎտ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՊԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝




Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 մարտի 2017թ.
ժամը 16⁰⁰